ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՄՎԵԼ ԽԱՉԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ հիմք ընդունելով Վաչիկ Սամվելի Մանուկյանի դիմումը, Աշոտիկ Հրաչիկի Նալբանդյանի, Վահան Արտուշի Մանուկյանի, Ալբերտ Մանուկի Սարգսյանի հայտարարությունները, անձնագրերը, ամուսնության վկայականը, ծննդյան վկայականները՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի բնակիչ Սամվել Խաչիկի Մանուկյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ բաղկացած է եղել հինգ անձից.

Սամվել Խաչիկի Մանուկյան - ինքը (ծնված 11.08.1960 թվականին),

Սիրանուշ Մկրտչի Մանուկյան – կինը (ծնված 31.03.1964 թվականին),

Խաչիկ Սամվելի Մանուկյան - տղան (ծնված 07.06.1988 թվականին):

2. Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի բնակիչ Սամվել Խաչիկի Մանուկյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հարթագյուղ գյուղում ունեցել է բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է: